

Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր. C T A T B W. A R T I C L E S.

ԲԱՌԱԾԱՆՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱԾԱՆՑԱՎՈՐ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՔ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ՄԵԼԱՆՅԱ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական

համալսարան

Մ.գ.դ., պրոֆեսոր

astvatsatryanmelanya35@aspu.am

ՇՈՒՇԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Քոզնայզ Էնջինիրինգ» ՍՊԸ

Տվյալների վերլուծաբան

shushanik.petrosyan888@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-18

Համառոտագիր

Այս հոդվածում բացահայտվում է ժամանակակից գերմաներենում բայական բառակազմության էությունը համաժամանակյա տեսանկյունից:

Մեթոդական նպատակով իրականացվել է արևմտալեզու տարբեր մակարդակների մոդելների, ինչպես նաև կառուցվածքային և ածանցյալ միավորների իմաստաբանական մոդելների սահմանազատում:

Ուսումնասիրության առարկան գերմաներենում գործող նախածանցավոր և այսպես կոչված կիսաածանցավոր բայերն են, ինչպես նաև դրանց կառուցվածքային և կառուցվածքաիմաստային տարբերակները: Կառուցվածքային նախածանցավոր մոդելի որոշիչ գործոնը ածանցվող հիմքերի պատկանելությունն է որևէ խոսքի մասի: Կառուցվածքային նախածանցավոր մոդելների վերլուծությունը թույլ տվեց բացահայտել դրանց իմաստային համանմանությունը համաժամանակյա տեսանկյունից:

Աշխատանքում բնութագրվում են նախածանցավոր ածանցյալ միավորները և ածանցվող հիմքերը, մոդելի բաղադրիչների հարաբերություններն ու փոխազդեցությունը, ինչպես նաև սովորողների պոտենցիալ բառապաշարի ձևավորման և հավանական կանխատեսման մեխանիզմների ձևավորման հնարավորությունը:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ բայական բառակազմություն, բայածանց, նախածանց, կիսաածանցավոր բայեր, ածանցվող հիմք,

կառուցվածքային մոդել, կառուցվածքաիմաստային մոդել, հավանական
կանխատեսում:

**AFFIXATION AS A BASIS FOR THE SELECTION AND
CLASSIFICATION OF DERIVATIONAL PATTERNS IN MODERN
GERMAN LANGUAGE**

MELANYA ASTVATSATRYAN

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

D. Phil., Professor

astvatsatryanmelanya35@aspu.am

SHUSHANIK PETROSYAN

Cognaize Engineering LLC

Data Analyst

shushanik.petrosyan888@gmail.com

Abstract

The paper reveals the essence of word formation in the modern German language in a synchronic way.

For the purpose of methodology we distinguish the models on different levels of abstraction, models of structure and models of semantics of derivational units.

The object of research is prefixal and so called semi-prefixal verbs in German as well as their structural and structural-semantic versions. Defining the structural prefix models that the derivatives belong to a concrete part of speech.

For methodological purposes we distinguish prefixal models at different levels of abstraction. prefixal derivative units and derivative bases; the relation and interaction of model components as well as possibilities for developing learners' potential vocabulary and development of probabilistic prediction mechanisms.

The analysis of structural prefixal models allowed to identify their semantic variants - structural-semantic prefixal models, which is important for understanding the models developed by one or another word-formation model.

The paper specifies types and ways of word-formation analysis, on the basis of which structural and structural-semantic prefixal models are distinguished in the lexical-grammatical class of verbs.

As a result of the study of prefixes' semantics and derivative bases the inventory of structural-semantic prefixal models of modern German should be clarified in order to model word-formation in a synchronous way.

Keywords and phrases: verbal word formation, prefix, verbal prefix, verbal semi-prefix, derivative base, structural model, structural-semantic model.

**АФФИКСАЦИЯ КАК ОСНОВА ДЛЯ ВЫДЕЛЕНИЯ И
КЛАССИФИКАЦИИ ПРОИЗВОДНЫХ МОДЕЛЕЙ В СОВРЕМЕННОМ
НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ
МЕЛАНЬЯ АСТВАЦАТРЯН**

Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна

Д. п. н., профессор

astvatsatryanmelanya35@aspu.am

SHUSHANIK PETROSYAN

Cognaize Engineering LLC

Аналитик данных

shushanik.petrosyan888@gmail.com

Аннотация

В данной статье раскрывается сущность глагольного словообразования в современном немецком языке в синхронном плане.

В методических целях проведено разграничение моделей на разных уровнях абстракции, моделей структуры и моделей семантики деривационных единиц.

Объекта исследования выступают действующие в немецком языке префиксальные и так называемые полупрефиксальные глаголы, а также их структурные и структурно-семантические варианты. Благодаря этому оказалась возможной дифференциация различных семантических вариантов в рамках одной модели при полном совпадении словообразовательных структур. Определяющим для структурной префиксальной модели является принадлежность производящих основ к определенной части речи.

Анализ структурных префиксальных моделей позволяет выделить в синхронном плане их структурно-семантические аналоги.

В работе дана характеристика префиксальных производных единиц и производящих основ; соотношение и взаимодействие компонентов модели, а также возможности формирования потенциального словарного запаса обучающихся и развития механизмов вероятностного прогнозирования.

Ключевые слова и словосочетания: глагольное словообразование, префикс, префиксальные глаголы, полупрефиксальные глаголы, производящая основа, структурная модель, структурно-семантическая модель.

Ներածություն

Բառակազմական մոդելների վերլուծությունն ու յուրացումը առանձնակի կարևորություն է ստանում հատկապես ժամանակակից գերմաներենում: Մեծ քանակությամբ ածանցավոր և բարդ միավորների ստեղծման հնարավորությունը վկայում է վերջիններիս գործնական ուսումնասիրության անհրաժեշտության մասին:

Բայի նախաձանցման ենթահամակարգի ընտրությունը թելադրվում է բացառապես բայի կարևոր նշանակությամբ որպես նախադասության և ասույթի առանցքային կոնստիտուենտ՝ ապահովելով ամբողջ նախադասության ըմբռնումը:

Բառակազմության ուսուցումը ռացիոնալ է ռեցեպտիվ խոսքային գործունեության զարգացման, հատկապես ընթերցանության համար, քանի որ ածանցավոր միավորի իմաստի բացահայտման կարողությունը հանգեցնում է պոտենցիալ բառապաշարի ընդլայնմանն ու հարստացմանը, ինչպես նաև լեզվական կոահման մեխանիզմների զարգացմանը:

Նախաձանցները ոչ միայն փոփոխում են ածանցյալ հիմքի իմաստը, այլ նաև վերջինիս կարող են հաղորդել որոշակի քերականական իմաստ՝ առանց բովանդակությունը էապես փոփոխելու:

Այսպես, օրինակ *be-* նախաձանցը բառիմաստային արտահայտման հետ մեկտեղ կարող է հաղորդել բային անցողիկության քերականական կարգի նշանակություն, օրինակ՝ *steigen-besteigen, treten-betreten* և այլն, ինչը պետք է հաշվի առնել դասավանդման ընթացքում:

Այս երևույթը առկա է նաև հայերենում: Ինչպես նշվում է «Ժամանակակից հայոց լեզու» աշխատությունում, հետևյալ քառանդամ հակադրությունները՝ անհանգիստ, անհանգստություն, անհանգստանալ, անհանգստորեն, վերաբերելով բառակազմությանը, ունեն նաև քերականական արժեք և այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում քերականության համար [1, էջ 123]:

Գերմաներենի բայական նախաձանցական բառակազմություն

Բայական նախաձանցների գործառույթների բազմազանությունն ու բարդությունը պայմանավորված են նրանց տարասեռ կազմությամբ և տարբեր բայական և անվանական հիմքերի փոխներգործությամբ, դրանց տարբեր քերականական և բառական իմաստի դրսևորմամբ:

Գերմաներենի բառակազմության համակարգում կարևոր տեղ են գրավում բուն ածանցավոր (*be-, ent-, er-, ver-* etc.) և այսպես կոչված կիսաածանցավոր (*auf-, aus-, bei-, über-* etc.) բայերը, որոնք ըստ Մ. Դ. Ստեպանովայի, գործում են բայերի բառաքերականական կարգում:

Կիսաածանցավոր բայերի հիմքում ընկած գործոնները հետևյալն են՝

ա) դրանց երկակի բնույթը. կիսանախաձանցները որպես համար-
ժեքներ ունեն համահունչ կոռելյատներ, որոնք գործում են որպես ինք-
նուրույն բառեր՝ միաժամանակ իրենց գործառույթներով նմանվելով նա-
խաձանցներին;

բ) դրանց կրկնապատկման օժտվածությունը, այսինքն իրենց սե-
րիական բնույթը:

Այսպիսով, իմաստային արմատական ձևույթի հետ կիսաաձանց-
ները ստեղծում են լայն բառակազմական կարգ [4, c. 105-106]:

Նախաձանցյալ բայական մոդելներ

Auf-տեսակի կիսանախաձանցների հակասական էությունն այն է,
որ նրանք դառնում են ընդհանրական և ձեռք են բերում հատուկ նշա-
նակություն, սակայն ոչ որպես ինքնուրույն բառեր, այլ որպես ձևույթներ,
որոնքբայերի ամբողջական խմբերին տալիս են որոշակի հատկանիշ:

Աձանցյալ բայերի տիպաբանության հիմքում ընկած առանձնա-
հատկությունները, ընկալման և գործածության դժվարությունները բա-
ցահայտելու նպատակով անցկացվել է բայաձանցների բառակազմական
վերլուծություն:

Մեր առջև խնդիր էր դրված քննել այդ տիպի բայաձանցների կա-
ռուցվածքային և կառուցվածքաիմաստային մոդելների կարգավիճակը,
իմաստային ոլորտի փոխակերպումը, ինչպես նաև սահմանել ընկալման
դժվարությունները:

Նախաձանցավոր բայերի ընկալման դժվարությունները բխում են
հենց դրանց բառակազմական առանձնահատկություններից: Մի կողմից
դրանք պայմանավորված են բայաձանցների որոշակի խմբերի կառուց-
վածքային կազմությամբ, մյուս կողմից՝ առաջին բաղադրիչի բազմիմաս-
տությամբ:

Հենվելով Ե. Ս. Կուբրյակովայի, Մ. Դ. Ստեպանովայի և Մ. Գ.
Աստվածատրյանի աշխատությունների վրա՝ աձանցման հետ կապված
գործոնների թվին մենք վերագրում ենք հետևյալը՝

ա) բառերը առանձին իմաստային բաղադրիչների մասնատելու
կարողություն/անկարողություն (թերի մասնատվող աձանցների դեպ-
քում),

բ) մասնատված բաղադրիչների հանդես գալը տարբեր միջավայ-
րերում՝ թե թերի մասնատվող, թե ձևականորեն մասնատվող հիմքերում,

գ) ածանցյալ բառերի մասնատվող հատվածների կարողությունը տարբեր միջավայրերում միևնույն/ոչ միևնույն իմաստով կրկնվելն է, այլ կերպ ասած՝ ենթադրում է դերիվատիվ ամբողջ շարքին այս կամ այն բնորոշ նշանակության տալը:

Նախածանցավոր կազմությունների վերլուծությունը ձևաբանական մասնատման և բառակազմական ածանցման տեսանկյունից թույլ է տալիս տարբերակել ձևաբանորեն և պայմանականորեն մասնատվող միավորները: Կառուցվածքային մոդելի բաղադրիչների ընտրությունը չի սահմանափակվում դերիվատիվ նախածանցի և բառերի բառաքերական-նական դասի հետ համատեղելիությամբ:

Նախածանցավոր բառակազմական ձևույթը կապ է հաստատում բառերի որոշակի իմաստային խմբերի հետ: Սա նշանակում է, որ բառակազմական մոդելի շրջանակներում ներքին դերիվատիվ ածանցման հասկացությունը կարող է կոնկրետացվել՝ հենվելով, մի կողմից ածանցվող հիմքերի բառաքերականական ցուցիչի, մյուս կողմից՝ ածանցվող հիմքի բառիմաստային կարգի վրա: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նախածանցի իմաստը, ինչպես նաև մոդելի՝ բաղադրիչների և դրանց համակցման միջև փոխազդեցության օրինաչափությունները [5, c. 9]:

Վերլուծության տեսանկյունից նախածանցավոր կառուցվածքային մոդելի որոշիչ գործոնը բաղադրող հիմքի՝ խոսքի որոշակի մասի (բայերի, գոյականների, ածականների, մակբայների դասին՝ *beraten* (*be->V*), *erörtern* (*er->S*), *entwässern* (*ent->S*), *vertiefen* (*ver->Adj*), *verspäten* (*ver->Adv*)) պատկանելն է: Նախածանցավոր կառուցվածքային մոդելների վերլուծությունը հնարավորություն է տալիս դիտարկել դրանց իմաստային տարբերակումը: Այս պարագայում միայն կառուցվածքային մոդելների ընտրությունը բավարար չէ նախածանցավոր մոդելի իմաստի ընկալման և վերջինիս իմաստային խմբերի տարբերակման առումով (հմմտ. *abfahren*, *-reisen* և *abbliühen*, *-klingen*): Ձևաբանական կառուցվածքների լիովին համընկնման դեպքում նախածանցավոր բառակազմական ձևամասնիկը կապ է հաստատում բառերի որոշակի իմաստային խմբերի հետ: Սա նշանակում է, որ բառակազմական մոդելի շրջանակներում ներքին դերիվատիվ բառակերտման հասկացությունը կարող է ճշգրտվել՝ մի կողմից հենվելով բաղադրող հիմքի բառաքերականական ցուցիչի, մյուս կողմից՝ բառիմաստային կարգի վրա: Այս դեպքում

անհրաժեշտ է հաշվի առնել նախաձանցի իմաստը, ինչպես նաև մոդելի բաղադրիչների և դրանց համակցման փոխազդեցության օրինաչափությունները [նույն տեղում]:

Բառաձանցումների և առանձին մասերի բաժանվելու դեպքում բառազույգը բնութագրվում է ածանցման փոխհարաբերությամբ, եթե նրանց միջև հնարավոր է ստեղծել թե՛ ձևաբանական, թե՛ իմաստային կապ: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է նախաձանցի և կոռելյատի առկայությունը, որը համապատասխանում է, ըստ Ե. Ս. Կուբրյակովայի, կառուցվածքաիմաստային առումով ածանցյալ հիմքերի բառային միավորներին:

Այսպիսով, վերլուծելով գերմաներենի բայաձանցները որպես բառակազմական միջոցներ՝ անհրաժեշտ է հաշվի առնել՝

ա) տիպական նշանակության ամբողջ ածանցյալ շարքը,

բ) ածանցվող և ածանցված հիմքերի կառուցվածքային ու կառուցվածքաիմաստային հարաբերակցությունը:

Բառաձանցումների վերոնշյալ չափանիշների հիման վրա պետք է բացառել beobachten, verlieren տիպի կազմությունները՝ որպես բառակազմական համընթաց ածանցումների կազմության անհամապատասխանության հետևանք: Մնացորդը, որը առանձնացվում է be- և ver- բաժանման արդյունքում, լիովին իմաստազրկված է, որը հիմք է տալիս չդասել դրանք ածանցյալ միավորներին և բառակազմական միանիմումին:

Ինչ վերաբերում է բայերի կազմությանը, օրինակ՝ bekommen, verstehen, որոնց բաղադրող հիմքը ձևականորեն համապատասխանում է բառաձանցման ինքնուրույն բառերի իմաստին, ապա նրանք չեն համապատասխանում երկրորդ պահանջին՝ ինքնուրույն բառերի kommen, stehen իմաստային համահարաբերակցմանը: Այս դեպքում բացակայում է ածանցի և ինքնուրույն բայերի իմաստային կապը: Այդ պատճառով դրանք նույնպես բացառվում են բառակազմական նվազագույնից:

Բայաձանցավոր կառուցվածքային և կառուցվածքաիմաստային մոդելների բնույթից էապես կախված են ներմուծման և բացատրության ռազմավարությունը, ինչպես նաև նյութի ամրապնդման վարժությունների համակարգը:

Բայական նախաձանցների և բաղադրող հիմքերի իմաստային ոլորտի ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ է ճշտել ժամանա-

կակից գերմաներենի կառուցվածքաիմաստային մոդելների ցանկը՝ բառակազմության մոդելավորման նպատակով:

Գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, 586 էջ:
2. Кубрякова Е. С., Основы морфологического анализа (на материале германских языков). М.: ЛКИ, 2012. 328 с.
3. Аствацатрян М. Г. К проблеме словообразовательного моделирования (на материале префиксальных глаголов современного немецкого языка // “Филологические науки. Вопросы теории и практики”, N 11 (41). Часть 2. - 2014. - С. 37-40.
4. Степанова М. Д. Методы синхронного анализа лексики (на материале современного немецкого языка). МПб: МЦФРб 2004. 208 с.
5. Пиоттух К. В. Система префиксации в современном английском языке [Текст]: Автореферат дис. на соискание ученой степени кандидата филологических наук. (663)/ Моск. гос. пед. ин-т иностр. яз. им. Мориса Тореза. - Москва: [б. и.], 1971. - 30 с.
6. Fleischer W., barz I. Wortbildung der deutschen Gegenwartssprache. Berlin-Boston. -2012. De Gruyter (Studium). - 371
7. Helbig G., Schenkel W. Wörterbuch zur Valen. und Distribution deutscher Verben., Gruyter (Studium) Leipzig, 2011, 454 S.
8. <https://grammis.ids-mannheim.de/fragen/3049>
9. <https://www.redalyc.org/journal/6645/664572411004/html/>
10. <https://www.dialog-wien.at/ueber-uns/blog/praefixe/>
11. <https://www.grin.com/document/73396>